# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԷՌԹԻ Մեդիքլ-Ն ԳՍԳՆՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/12 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 42 | RTMedical | RTMedical | RTMedical | RTMedical | Բժշկական պահարան՝ ապակեպատ դռներով Պահարանը նախատեսված է բժշկական հաստատությունում բժշկական պարագաների, նյութերի, գործիքների և այլ թույլատրելի բժշկական նշանակության իրերի պահպանման համար: Պահարանի կորպուսը պետք է պատրաստված լինի մետաղական թիթեղից կամ համարժեք ամուր նյութից, որը պիտանի է բժշկական միջավայրում օգտագործման համար: Մակերեսը պետք է լինի հարթ, չկլանող, հեշտ մաքրվող և ախտահանվող: Մետաղական մակերեսները պետք է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ունենան կոռոզիայից պաշտպանող փոշեներկային կամ համարժեք պաշտպանիչ ծածկույթ։ Պահարանի դուռը/դռները պետք է լինեն ապակեպատ և ապահովեն պահվող պարագաների տեսանելիությունը։ Ապակին պետք է լինի ամուր և շահագործման համար անվտանգ, առանց ճաքերի, կոտրվածքների կամ այլ տեսանելի թերությունների։ Դուռը պետք է ունենա փակման և կողպման հնարավորություն՝ բանալիով կամ համարժեք մեխանիզմով։ Պահարանը պետք է ունենա առնվազն 4 դարակ։ Դարակները պետք է լինեն ամուր և նախատեսված բժշկական պարագաների պահպանման համար։ Դարակների դիրքը պետք է հնարավոր լինի կարգավորել կամ վերադասավորել՝ ըստ պահվող իրերի չափերի։ Յուրաքանչյուր դարակի թույլատրելի հավասարաչափ բաշխված ծանրաբեռնվածությունը պետք է լինի առնվազն 20 կգ։ Պահարանի արտաքին մոտավոր չափերը՝ բարձրություն՝ 1800–2000 մմ, լայնություն՝ 600–800 մմ, խորություն՝ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 350–500 մմ: Թույլատրելի չափային շեղումը կարող է ընդունվել, եթե այն չի խոչընդոտում պահարանի նախատեսված օգտագործմանը և տեղադրմանը: Պահարանի կառուցվածքը պետք է լինի կայուն և շահագործման ընթացքում չպետք է առաջացնի շրջվելու կամ դեֆորմացվելու վտանգ` նախատեսված օգտագործման պայմաններում: Կառուցվածքի եզրերը պետք է լինեն հարթ և չպետք է ունենան սուր կամ վնասվածք առաջացնող հատվածներ: Պահարանը պետք է ունենա կայուն հենարաններ/ոտքեր: Գույնը` սպիտակ կամ բժշկական հաստատության համար ընդունելի այլ բաց գույն: Պահարանի ներքին և արտաքին մակերեսները պետք է հնարավոր լինի մաքրել և ախտահանել բժշկական հաստատությունում կիրառվող համապատասխան միջոցներով:Ապրանքը պետք է լինի նոր , չօգտագործված |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԷՌԹԻ Մեդիքլ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԳՍԳՆՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/12 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 42 | | | | | |